Հայտարարվում են մրցույթներ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության, մաթեմատիկայի, կենսաբանության և ֆիզիկայի ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին: Մրցույթներին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),

-մեկ լուսանկար 3×4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ի մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ ,

հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի սեպտեմբերի 1-ից սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Ֆիզիկայի ուսուցչի թափուր տեղի մրցույթը տեղի կունենա 2025 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 13:00-ին՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մաթեմատիկայի ուսուցչի թափուր տեղի մրցույթը տեղի կունենա 2025 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 15:30-ին՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Կենսաբանության ուսուցչի թափուր տեղի մրցույթը տեղի կունենա 2025 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 14:00-ին՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հայոց լեզվի և գրականության ուսուցչի թափուր տեղի մրցույթը տեղի կունենա 2025 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը 14:00-ին՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, Մաշտոցի 1/4

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 54-44-25 հեռախոսահամարով: